




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3834

Հ. ԴԱՆՈՒՄ

ՀՈԿՏԵՄԲԵՐՑԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ

ՊԱՅԳԱՐԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ

ԶԵԿՈՒՅՈՒՄ ՄԱՍԿԱՅԻ ԿՈՐԶՐԻՆ ԴԱՅԵՄԲԵՐԻ 6-Ի
ՀԱՆԳԻՍԱՎՈՐ ՆԵՍՏՈՒՄ, ՆՎԻՐՎԱՆ ՀՈԿՏԵՄԲԵՐՑԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ XIV ՑԱՐԲԵՐԱՐԶԻՆ

9(47) 1917
5-86

ԳՍՏՀՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

19 AUG 2011

24 JAN 2006

9(47) 1917
У-86

u8

2043

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
Յ Ե Վ
ՊԱՅԻԱՐԸ ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ

(ԸՆԿՎ. ՄՈԼՈՏՈՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆՈ-
ՅԵՄԲԵՐԻ Ե-Ի ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏՈՒՄ, ՆՎԻՐՎԱԾ ՀՈԿՏԵՄ-
ԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ XIV ՏԱՐԵԴԱՐՁԻՆ)

957
417



1931
(5250)

ՅԵՐԵՎԱՆ

Պետրոսի Տպարան
Գրավիտ 6981 (ս)
Հրատ. № 1120
Պատվեր 6003
Տեղաթ 1500

4865-91

1. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՈՒՃԵՐԻ ՓՈԽՀԱՐԱՐԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Քննիչներ,

Հոկտեմբերյան հեղափոխության 14-րդ տարեդարձը կարևորագույն թվական է պրոլետարիատի աղատադրական պայքարի պատմության մեջ:

Տասնչորս տարի սրանից առաջ մեր յերկրի բանվոր դասակարգը թոթափեց կապիտալիզմի և կապիտալիստների տիրապետությունը և անցնելով աշխատավորների ամբողջ մասսայի շրջան, ձեռնարկեց սոցիալիզմի հիմունքներով նոր, աղափոխական կառուցելու գործին:

Այդ տարիների ընթացքում մենք անցել ենք թշնամի դասակարգային ուժերի դեմ պայքարելու դժվարագույն ուղին: Դասակարգային թշնամին կատաղի զիմադրություն էր ցույց տալիս սոցիալիզմի յինարարությունը վոչ մայն յերկրի ներսում: Այդ յինարարությունը կասկած էր առանձնահատուկ դժվարությունների հետ, չնորհիվ այն հանգամանքի, վոր ԽՍՀՄ՝ աշխարհի առաջին քանվորական պետությունը, մի տեսակ սեղմված է նրան անհաշտ ռեյիսին թշնամի կապիտալիստական ողակում:

Բայց չնայած այդ բոլոր դժվարություններին, սոցիալիզմն այդ տարիների ընթացքում հսկայորեն առաջ է գնացել, մեծապես ամրայնելով իր դիրքերը: Այս պատճառով Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարվա չեմբին մենք իրավունք ունենք հաստատելու, վոր դոյություն ունեն յերկու հիմնական հասարակական ուժեր— սոցիալիզմ և կապիտալիզմ, վորոնց պայքարով է վորոշվում համաշխարհային դարդացման հիմնական գիծը:

Այդ յերկու հիմնական, համաշխարհային ուժերի փոխհարաբերությունների մեջ այս տարիների ընթացքում կատարվել են զդալի փոփոխություններ: Հոկտեմբերյան հեղափոխության առաջին տարիների արդյունքների հանրադուստր կազմելիս վճռական նշանակություն ունի պատասխանն այն հարցի, թե հատկապես վո՞րն է սոցիալիզմի և կապիտալիզմի ուժերի փոխհարաբերության այդ փոփոխությունը:

Հետադարձ հայացք գցելով, բանվոր դասակարգը պարձանքով կարող է հայտարարել, վոր անցել է հսկայական, այն էլ իսկապես հաղթական ուղի: Սոցիալիզմն արդեն դարձել է մի գործիչ, այն էլ արագ աճող ուժ: Յերկրի ներսում կատարվող դարդացման հիմնա-

կան գիծն իր արտահայտութիւնն և գտել կապիտալիստական ձեռքերի ավելի ու ավելի արագացող արտադրման ու փշրման և սոցիալիզմի ուժերի ամբողջ ֆրոնտով հաղթական ծափարման մեջ:

Կապիտալիստական յերկրներում գոյութիւն ունեցող ամենախոր անտեսական ճգնաժամի այժմյան պայմաններում, սոցիալիզմի և կապիտալիզմի զարգացման ուղիների հակադրականութիւնը չի բեան և դալիս առանձին ուժով:

Այժմ արդեն չկա այնպիսի կապիտալիստական յերկիր, վորը անտեսական ճգնաժամից դուրս լինի: Կապիտալիզմն ավելի ու ավելի խորն և թաղվում համաշխարհային ճգնաժամի փոսի մեջ: Մի շարք յերկրներում ճգնաժամը տեւում և արդեն յերկու տարի, անգամ ավելի: Չկա նրա վերջանալու վոչ մի նշան: Ընդհակառակը համաշխարհային ճգնաժամն որեցոր ավելի յի փորում կապիտալիզմի հիմքերը:

Այսպիսով սոցիալիզմի և կապիտալիզմի զարգացման ուղիներն ուղղակի հակադրի ուղղութիւններով են ընթանում: Սոցիալիզմը հաղթականորեն գնում և դեպի վեր, դեպի վերեւը: Կապիտալիզմն ավելի ու ավելի յի խճճվում իր հակասութիւնների մեջ և համաշխարհային ճգնաժամի ծանրութեան տակ կորցնում և իր դիրքերը մեկը մյուսի հետեւից:

Սոցիալիզմի և կապիտալիզմի զարգացման այս հիմնական գծերի մասին պերճախոս կերպով վկայում են բազմաթիւ փաստեր: Ամենից առաջ վերցնենք հետպատերազմյան շրջանի արդյունաբերական արտադրութեան աճմանը վերաբերող փաստերը: Հետպատերազմյան շրջանում մի շարք կապիտալիստական յերկրներում գոյութիւն ունեւ արդյունաբերական զարգացման վորոշ վերելք: Տնտեսական ճգնաժամն որորի վրա ավելի ու ավելի յի կշանում այն համեմատաբար համեմատ հաջողութիւնները, վոր կապիտալիստական յերկրները ձեռք եյին բերել այդ ժամանակաւից: Այժմ արդեն տիրում և այնպիսի գրութիւն, յերբ կապիտալիզմի յերկրների արդյունաբերական արտադրութեան ընդհանուր մտկարգակն ընդամենը միքանի տոկոսով և բարձր նախապատերազմյան մակարդակից: Ավելին: Այնպիսի առաջավոր կապիտալիստական յերկրում, վորպիսին և Գերմանիան, գոյութիւն ունի նույնիոկ գաղապես ավելի փառթար գրութիւն: Այդտեղ արդյունաբերական արտադրութեան մակարդակը տվյալ մոմենտում հասել և այն դրութեանը, վորի մեջ գտնվում էր գերմանական արդյունաբերութիւնը որանից մոտավորապես 30 տարի առաջ:

Այսպիսով այժմ արդեն չի կարելի խոսել հետպատերազմյան շրջանը կապիտալիզմի վորեն իրական հաջողութիւնների մասին:

Բոյորոպին այլ գրութիւն և մեր յերկրում, կառուցվող սոցիալիզմի յերկրում:

Արդի արդյունաբերական արտադրութիւնը համեմատաբար նախապատերազմյան մակարդակին՝ ՈՍՀՄ-ն տալիս և բոյորոպին այլ պատկեր: Այստեղ այժմ իսկ մենք ունենք արդյունաբերական

արտադրութեան այնպիսի մակարդակ, վորն ավելի քան յերկուսու կես անգամ գերադանցում և նախապատերազմյան շրջանի արտադրութեան մակարդակին: Դրան ավելացրեք և այն, վոր բոլորի աչքի առջև ծափավում և այնպիսի մի շինարարութիւն արդյունաբերութեան ասպարիզում, վորը տարեցտարի ստահում և արդյունաբերական արտադրանքի ավելի ու ավելի մեծ աճում:

Հետևապես, սոցիալիզմի հաղթական հաջողութիւններն արդյունաբերութեան ասպարիզում անվիճելի յեն:

Վերցնենք այն հարցը, թե ինչ վիճակումն և գտնվում բանվոր գասալարգը կապիտալի յերկրներում և Սորհրդային Միութեան մեջ: Սրա մասին ամենից լավ խոսում են այն փաստերը, վորոնք վերաբերում են գործադրկութեանն ու աշխատավարձին:

Կապիտալիզմի յերկրներում գործադրկութիւնը հասել և չլուսված չափերի: Այդտեղ գործադրկների բանակների թիւը հասում և արդեն տասնյակ միլիոնների: Գործադրկութիւնը վոչ միայն չի ակտում նվազել, այլև ընդգրկում և բանվորների նորանոր միլիոններ: Հարյուր-հազարավոր և միլիոնավոր գործադրկներ հասել են ուղղակի սովի, կիսամուրացի վիճակի: Միքանի յերկրներում գործադրկներն ու կիսադործադրկներն արդեն կազմում են բանվոր գասակարգի կիսից ավելին: Գործադրկների դրութիւնն որեցոր ավելի ու ավելի հուսահատական և դառնում:

ՈՍՀՄ-ում գործադրկութիւնը գոյութիւն չունի: Սոցիալիզմի յերկրում կառուցվում են նոր ֆաբրիկներ ու գործարաններ, բացվում են նոր ձեռնարկութիւն-գիղանոներ: Արդյունաբերութեան մեջ գրադված բանվորների կադրերն անընդհատ աճում են, այն ել տարեցտարի ավելի մեծ արագութեամբ: Եւդ մոտ արդյունաբերական շրջաններում բանվորների մեծ պակաս և զղացվում: Այդ դեպքի: Ե: Բանվոր գասակարգի դրութեան համար խիստ կարեւոր են այն փաստերը, վորոնք վերաբերում են աշխատավարձի հարցին:

Վոչ մի կապիտալիստական յերկրում այժմ խոսք անգամ չկա բանվորների և ծառայողների աշխատավարձի ավելացման մասին: Ընդհակառակը, յուրաքանչյուր նոր որ բերում և աշխատավարձի նոր պակասեցում բանվոր գասակարգի աչա կամ այն յերտի համար: Գործադրկների թվի արագ աճման հետ միասին կատարվում և բանվորների աշխատավարձի թալանչիական իջեցում, վոր կապիտալիստները կիրառում են պիտոկան իշխանութեան ոժանդակութեամբ և սոցիալ-դեմոկրատիայի ակտիւ աջակցութեամբ:

Միայն ՈՍՀՄ-ում անչեղորեն կիրառվում և բանվոր գասակարգի կյանքի ու յիտական պայմանների բարելավման յարգաբանութիւնը: Բանվորների աշխատավարձն այստեղ բարձրացվում և տարեցտարի: Ինչպես հայտնի յի, բացի յերկաթուղային և չրային տրանսպորտի աշխատողների աշխատավարձի այս տարվա շոշափելի բարձրացումից, հենց նորերս բարձրացվեց անխաղճարկութեան մեծազաղարկութեան բանվորների աշխատավարձը, ինչպես նաև

զգալի չափով բարձրացվեց ամբողջ ուսուցչութան աշխատավարձը։
Կարելի չէ բերել լիլ շատ փաստեր այն մասին, թե ինչպես են
փաստանում բանվորների կյանքի պայմանները կապիտալի յերկրնե-
րում և ինչպես դրա հետ միաժամանակ կատարվում է բանվոր դա-
տակարգի կյանքի նյութական և կուլտուրական պայմանները բար-
ձրացումը սեր յերկրում։ Իսկ այսօրվան ել բավականաչափ պայ-
ծառ լույս է տրուում բանվորների դրուժյան վրա կապիտալիզ-
մի յերկրներում և Սորհուրդների Սոցիալիստական Հանրապե-
տության մեջ։ Միայն պրոլետարական գերատառերային յերկ-
րում բանվորի առջև բաց է կյանքի նյութական և կուլտուրա-
կան պայմանների իսկական րարելավման լայն հնարավորությունը։

Գյուղի աշխատավորների գրության արմատական տարրերու-
թյունը կապիտալիստական յերկրներում և Սորհուրդային յերկրում
նույնպես միանգամայն ակնհայտ է։ Կապիտալիզմի յերկրներում
միլիոնավոր գյուղացիներ այժմ ապրում են րացառիկ ծանր Ժա-
մանակ։ Համաշխարհային ճգնաժամը և դրան զուգակից արդյու-
նաբերական արտադրության կրճատումը, հետեաբար և գյուղա-
տնտեսական հումքի ու գյուղատնտեսական ալլ մթերքների առ-
հանջի կրճատումը, հարված են հասցնում գյուղին, մանավանդ
գյուղացիության հիմնական մասային։ Գյուղացիների քայքայու-
մը տնտեսական ճգնաժամի, ինչպես նաև ավելացող հարկային բեռի
ծանրության տակ, այժմ տեղի յե ունենում առանձին արագու-
թյամբ։ Ել չենք խոսում այն մասին, վոր աշխատավոր մասսաների
դրությունը գաղութներում և կիսագաղութներում անչափ ծանր
է։ Այստեղ գյուղի աղքատացումը հասնում է ծայր աստիճանի։
Գերիշխող կապիտալիստական յերկրները ձգտում են տնտեսական
ճգնաժամի գլխավոր ծանրությունը փոխադրել իրենց ստրկացրած
գաղութների և իրենցից կախյալ յերկրների ուսերին։ Այդ պատ-
ճառով իմպերիալիզմի գործադրած ճնշումը և բանվորական ու
գյուղացիական մասսաների աղքատությունն այդտեղ հասնում է
ծայրահեղ չափերի։

Բոլորովին ալլ դրության և մեր բանվորա-գյուղացիական պե-
տության մեջ։

Սորհուրդային Միության մեջ կատարվում է գյուղատնտեսու-
թյան վերելք, ամենից առաջ չնորհիվ կուլեկտիվացման արագ հա-
ջողությունների։ Առաջավոր տեխնիկայի՝ տրակտորների, կոմ-
բայնների վրա հենվող կուլեկտիվ խոշոր տնտեսության ստեղծումը
նշանակալից չափով թեթեացնում է գյուղացու աշխատանքը,
բարձրացնում է նրա աշխատանքի արտադրողականությունը, առ-
նում է դեպի նրա կյանքի պայմանների բնդհանուր բարելավումը։
Գյուղատնտեսության ուժեղացող վերելքը, գյուղացիական մաս-
սաների կյանքի նյութական-կուլտուրական պայմանների անընդ-
րարելավումը, Հոկտեմբերյան հեղափոխության կարևորագույն
հաջողություններից մեկն են վերջին տարիների ընթացքում։

Ահա այն փաստերը, վորոնք վերաբերում են արտադրողական

ուժերի դարգացմանը և աշխատավոր մասսաների դրությանը՝ մեկ
կողմից Սորհուրդների յերկրում, մյուս կողմից՝ կապիտալիզմի
յերկրներում։

Այս փաստերը վկայում են, վոր այժմ դործը վերաբերում է
գրության փաթիտացմանը վոչ միայն այս կամ այն առանձին կա-
պիտալիստական յերկրում։ Հարցը մինչև իսկ այն չէ միայն, վոր
կապիտալիստական յերկրները վտոք են դրել ամենախորունկ արն-
տեսական ճգնաժամի չրջանը։ Սոսքը վերաբերում է ավելի մեծ
բանի։ Փաստերը, վորոնց թիվն արագորեն աճում է, վկայում են,
վոր կապիտալիզմը վորպես շատուկ հասարակական սիստեմ, վտոք
է դրել անկման չրջանը, վտոք է դրել ավելի ու ավելի խորացող
և ակնհայտորեն անելանելի բնդհանուր ճգնաժամի չրջանը։

Հասարակական դարգացման փաստերն ավելի ու ավելի վճռա-
կանորեն են խոսում կապիտալիզմի դեմ՝ ամբողջությամբ առած։
Միաժամանակ այդ փաստերը վոչ պակաս վճռականորեն են խոսում
մեր գործի ոգտին՝ ամբողջ կապիտալիստական սիստեմի հանդեպ
ոսցիալիզմի վերջնական հաղթանակի մոտենալու ոգտին։

Այս է սոցիալիզմի և կապիտալիզմի, այդ համաշխարհային
ուժերի փոխհարաբերության դարգացման հիմնական տենդենցը։

Կապիտալիզմն ապրում է իր կյանքի վերջին չրջանը։ Նրան
փոխարինելու յե գալիս սոցիալիզմի հասարակարգը։ Համաշխար-
հային դարգացման փաստերը վկայում են, վոր կապիտալիզմն ամ-
բողջ աշխարհում տապալելու նախադրյալներն արագորեն հասու-
նանում են։ Այդ փաստերն ավելի ու ավելի պերճախոս են խոսում
այն մասին, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը յեղել է վոչ
միայն մեր յերկրի բանվոր դասակարգի մեծ հեղափոխությունը,
այլև այն, վոր Հոկտեմբերյան հեղափոխությունը հանդիսանում
է միջազգային սոցիալիստական հեղափոխության հաղթական
սկիզբ։ Հոկտեմբերյան հեղափոխության մեծագույն պատմական
նշանակությունն այն է, վոր նա բացել է նոր դարագլուխ ամբողջ
մարդկության դարգացման մեջ։ Նրա անցած ուղին և համաշխար-
հային հիմնական հասարակական ուժերի այժմյան դարգացման
յուրաքանչյուր նոր որն անվիճելի պարզությամբ հաստատում են,
վոր մենք ապրում ենք արագորեն աճող միջազգային պրոլետարա-
կան հեղափոխության դարաչրջան, ամբողջ կապիտալիստական
սիստեմի մոտեցող կրախի դարաչրջան, սոցիալիզմի մոտեցող լիա-
կատար հաղթության դարաչրջան։

Անցել է 14 տարի, իսկ մեր յերկիրը դեռևս մնում է Սորհուրդ-
ների միակ սոցիալիստական պետությունն աշխարհում։ Յե՛մ այ-
նուամենայնիվ, միայն կույրի համար սնտեսանելի յե, վոր միջազ-
գային սոցիալիզմի հաղթության դործը հսկայական քայլերով է
առաջ չարժվում։

Գրուլետարիատի պայքարի զժվարությունները կապիտալիստա-
կան յերկրներում նրանից են այնքան մեծ, վոր կապիտալիստների
դեմ բանվորների մղած պայքարի ներքին հարցերի լուծումն ավելի

ա. ավելի անխղճությունն և հյուսվում բուրժուադեմոկրատիայի դեմ պրոլետարիատի մղած պայքարի միջադպարին խնդիրների լուծման հետ: Կապիտալիստական պետությունների շահերն այնքան են միահյուսվել, այդ միահյուսումը տարեցտարի այնքան և ուժեղանում, վոր սոցիալիզմի համար մի յերկրում մղվող պայքարի խնդիրները լուծումն ավելի ու ավելի յե հյուսվում աշխատանքի ու կապիտալի, պրոլետարիատի և իմպերիալիզմի միջև մղվող պայքարի միջադպարին պրոլետարիատի լուծման հետ:

Այս նշանակում և, մեկ կողմից, պրոլետարիատի հաղթության զգալիությունների աճում մի առանձին կապիտալիստական յերկրում: Բայց այս միաժամանակ նշանակում և, վոր բանվոր դասակարգի պայքարի նոր, իսկական հաղթությունը մեկ կամ մյուս կապիտալիստական յերկրում բացառիկ ուժով առաջ և մղելու սոցիալիզմի միջադպարին հաղթության ամբողջ գործը: Այսպիսով, բանվորների պայքարի հաղթություններն առանձին յերկրում այժմ ավելի ու ավելի յեն հյուսվում ամբողջ միջադպարին պրոլետարիատի կողմից իմպերիալիզմից աղատագրվելու համար մղվող պայքարի հետ:

Հոկտեմբերյան հեղափոխության պատմությունը ցույց և տալիս, թե ինչպես կարող է այդ բանը տեղի ունենալ պրակտիկայում: Լավ հայտնի յե, վոր մեր յերկրի պրոլետարիատն ստիպված յեղավ այս տարիներին ընթացքում պայքար մղել վոչ միայն տնտեսական բոկաղ կազմակերպելու մշտական փորձերի դեմ, այլև իմպերիալիստական պետությունների կողմից ուղղակի ռազմական ինտերվենցիա կազմակերպելու դեմ: Միայն շնորհիվ այն հանդամանքի, վոր մեր յերկրի աշխատավորները, կապիտալիստական յերկրների բանվորների աջակցությամբ, իրենց մեջ բախտահաջափ ուժ գտան ջանախնդրի դասակարգային թշնամուն յերկրի ներքում և դրա հետ միատեղ հետ մղելու արտաքին իմպերիալիստական ուժերի հարձակումը, միայն շնորհիվ այդ հանդամանքի Հոկտեմբերյան հեղափոխությունը հաղթականորեն տոնում և իր 14-ամյակը:

Բայց պարզ և, վոր մեր պայքարի դասը պետք և յուրացնեն սոցիալիզմի համար մարտնչությունը բոլոր յերկրներում:

Վերադառնում եմ այն հիմնական հարցին, թե ի՞նչ են առում մեզ Հոկտեմբերյան հեղափոխության 14-ամյակի արդյունքները սոցիալիզմի և կապիտալիզմի ուժերի փոխհարաբերության զարգացման հիմնական սիմվոլին: Այդ զարգացումը խոսում և մեր ոգտին, սոցիալիզմի գործի ոգտին, մեր թշնամիների դեմ, կապիտալիզմի դեմ: Իսկ այդ նշանակում և, վոր ախարհի զարգացման հիմնական գլխի տանում և ղեկի սոցիալիզմի միջադպարին գործի հաղթանակն իմպերիալիզմի վրա: Հոկտեմբերյան հեղափոխության 15-րդ տարիս շեմքին մենք կարող ենք պարծանքով առել, վոր համախառն աշխարհի զարգացման հաղթությունը մոտենում և հսկայական արագությունով, վոր նա մոտենում և աճող տեմպով:

II. ՀՈԿՏԵՄԲԵՐԻԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՎԷՐԹԱՅԻԿ ՄՈՐԵՆՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոկտեմբերյան հեղափոխությունն ունի իր պատմությունը: Այդ — պատմությունն և մեծագույն հաղթությունների: Այդ հաղթություններից դիտարկները գյուղացիական մասսաներին վերջնականապես պրոլետարիատի կողմը նվաճելու գծով ձեռք բերված հաղթություններն են:

Լենինը մատնանշում և, վոր հենց՝ գրանումն և կայանում մեր դիտարկը խնդիրը մինչև սոցիալիզմի հաղթությունը մեկ կամ մի քանի առաջավոր կապիտալիստական յերկրներում: Այդ տեսակետով առանձնապես կարևոր են Հոկտեմբերյան հեղափոխության զարգացման յերկու վճռական ետապները:

Դրանցից առաջինը վերաբերում և 1918 թվի աշնանը, յերբ սոցիալիստական հեղափոխությունն ինչպես հարկն և քայլեց քաղաքից ղեկի գյուղ, և յերկրորդը՝ 1929 թ., յերբ կատարվեց վերջնական հիմնական գյուղացիական մասսայի — միջակների վերջնական շրջադարձը ղեկի սոցիալիզմ:

Այս յերկու ետապներն ունեն վճռական նշանակություն սոցիալիզմի գործի համար մեր յերկրում: Այս յերկու թվականները — 1918 և 1929 թվերը — ուղենիշներ են սոցիալիզմի հաղթությունների, ամենահետամնաց դժվարին տնտեսական Ֆրոնտում, գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխության Ֆրոնտում:

Հոկտեմբերյան հեղափոխության ընթացքում պրոլետարիատի ձեռք բերած պանծալի հաղթանակների նշանակությունը բնորոշվում և ամենից ավելի նրանով, վոր մենք արդեն յենք տնտեսության սոցիալիստական ձևերի բացարձակ գերակշռություն վոչ միայն քաղաքում, այլ նաև գյուղում: Կապիտալիստական տարրերը ջանախնդր և ն վոչ միայն արդյունաբերության մեջ, այլև գյուղատնտեսության մեջ, այսինքն՝ Ժողովրդատնտեսության ամենատնտեսությունների յինարարության հաղթություններն ապահովել են սոցիալիստական ձևերի տիրապետող դիրք կապիտալիստական ձևերի հանդեպ, սեփականատիրական գյուղացիական տնտեսության հանդեպ:

Այսպիսով սոցիալիստական և կապիտալիստական տարրերի պայքարում մեր յերկրում սոցիալիզմը հաղթանակ և տարել: Լենինյան «ով ում» հարցին, այն հարցին, թե սոցիալիզմը կհաղթի կապիտալիստական տարրերին, թե ընդհակառակը, կապիտալիստական տարրերը կիշրեն սոցիալիզմի աճումը, մենք ունենք արդեն սպառիչ պատասխան: Բանվոր դասակարգը, հենվելով կոտնտեսություններում միավորված գյուղացիության ճնշող մասսայի վրա, հաղթանակ տարավ կապիտալիստական տարրերի հանդեպ: Դրանով իսկ սոցիալիզմի գործը մեր յերկրում ամբողջովին ու վերջնականապես ապահովված և:

Սրանք են մեր սոցիալիստական շինարարութեան աշխատանքները:

Իսկ մեր ընթացիկ խնդիրները ելուստները բոլորում են խորհրդային հեղափոխության ընդունած հնգամյա պլանից:

Մեր յերկրի ամբողջ բանվոր դասակարգի և աշխատավորների ուղղորդությունը կենտրոնացած է հնգամյակի և նրա կենսագործման վրա: Վորժբան ենք առաջ դնացել այդ գործում, ի՞նչ է պահանջվում հնգամյակի կենսագործման հետագա հաջողությունների համար—ահա այն հարցերը, վարոնցով ամենից առաջ ապրում է աշխատավորների և գյուղացիների հանրապետությունը: Ընդամենը մենք մեծագույն ուղղորդությամբ ենք վերաբերվում վորժբային այն բանին, թե ինչ են ասում մեր բարեկամներն ու համախոհները խորհրդային յերկրի ներսում ու նրա սահմաններից դուրս, այլ և այն բանին, թե ինչ են ասում դրա մասին մեր գաղափարական հակառակորդները, մեր դասակարգային թշնամիները: Այժմ չի խանգարում հիշել մեկին այն բազմաթիվ հայտարարությունները, վոր արվեցին մեր կուսակցության ընդունած հնգամյա պլանի հրապարակումից հետո: Յես նկատի ունեմ «Բերլինի Տագերառալըրի բուրժուական ակադամիոր ժուրնալիստ Պ. Շեֆերի հայտնի հայտարարությունը, այն Շեֆերի, վորն իր ժամանակին վաարվեց իՄՂՄ-ից կուսարտեսական հակախորհրդային աշխատանքի համար:

Այն ժամանակ Շեֆերը բավական ցայտուն կերպով արտահայտեց աբսուրդիստական շրջանների վորոշ մասի տրամադրությունը, հայտնելով հետևյալ միտքը. «Յեթե, —ասաց նա 1929 թվի կեսերին, —հնգամյակը հաջողվի նույնիսկ միայն յերեք քառորդով, ապա կսկսվի չի մնա, վոր սոցիալիստական մեթոդը վերջնական հաղթանակ կտանի Յեվրոպայում»:

Այժմ մենք պետք է հիշեցնենք մեր քաղաքական թշնամու այդ խոսքերը: Մանավանդ, վոր այն ժամանակ ասվածն այժմ հեշտ է ստուգելի փաստերով: Ահա թե ի չ հետևանքի յե հասցնում այդ ասույթումը:

Իհարկե, դեռևս վաղ է խոսել տնտեսական տարվա վերջնական հանրագումարների մասին: Առայժմ կարելի չէ անել միայն նախնական յեզրակացություններ: Բայց այդ վերջիններն արդեն իսկ պատկերացում են տալիս 1931 թվի հիմնական հանրագումարներին մասին:

Վերջին ամիսների ընթացքում մեզանում կա մեր արդյունաբերության զգալի բարելավում: Յեթե ընթացիկ տարվա առաջին ամիսներում արդյունաբերության մի շարք հիմնական տնտեսությունների աշխատանքի նշանակալից թերությունների հետևանքով, ապա վերջին ժամանակներս գոյություն ունի բարելավում ինդուստրիայի ամբողջ գծով: Մա նշանակալի չափով պետք է ծածկի արդյունաբերությունն առաջին ամիսների թերությունները:

Համեմայն գեղյո արդյունաբերության կողմից 31 թվին իրագործվող արտադրական ծրագիրը կգերազանցի հնգամյա

պլանում յերրորդ տարվա համար արված ուղղորդումները: Այժմ արդեն կատարյալ վստահությամբ կարելի չէ պնդել, վոր ներկա տարում ինդուստրիայի զարգացման ասպարիզում մենք այնքան առաջ կշարժվենք, վոր հետագա՝ 1932 թվին կկարողանանք լիովին ավարտել հնգամյա պլանի իրագործումը:

Մենք չենք կասկածում, վոր 1932 թ. կլինի հնգամյակի ավարտման տարի, այսինքն՝ հնգամյակը չորս տարում ավարտելու տարի (բուռն ծափեր):

Բուրժուական բանակին պատկանող մեր թշնամիները սխալվեցին իրենց հաշիվներում: Շեֆերը և նրա նմանները աներևակայելի էյին համարում հինգ տարվա ժամկետում հնգամյա պլանի անցում յերեք քառորդն իրականացնելը: Հակառակ դեպքում նրանք չէյին համարձակվի իր ժամանակին «մարդարեանալ» այն մասին, վոր նույնիսկ հնգամյա պլանի առաջադրանքների յերեք քառորդի իրագործման դեպքում ասպահովված կլինի սոցիալիստական մեթոդի հաղթությունը Յեվրոպայում:

Բայց իսկապես ի՞նչ է արված մինչև այժմ:

Այս հարցին պատասխան է հանդիսանում այն փաստը, վոր հենց ներկա ժամանակում, այսինքն՝ հնգամյակի յերրորդ տարվա վերջին, մենք արդեն մոտավորապես յերեք քառորդով իրագործել ենք հնգամյակը (ծափեր):

Բայց այդքանը մեզ համար քիչ է: Մենք պետք է ասպահովենք հնգամյակի լրիվ և միաժամանակ արագացրած իրագործումը: Յեվ այս պատճառով մենք բոլորս պետք է միասին պարտավորվյուն ամեն, վոր յեկող տարի կհաջողեցնենք հնգամյա պլանի լիակատար իրագործումը, այսինքն՝ իսկապես կկենսագործենք մեր հնգամյակը և տարում (ծափեր):

Հնգամյակի գյուղատնտեսության մեջ իրագործելու ասպարիզում վորոշ տնտեսակներով մենք ունենք ավելի մեծ հաջողություններ:

Հնգամյակում ուղղորդված է 1933 թվի վերջի համար գյուղացիական տնտեսությունների 20 տոկոսի կուլեկտիվացումը: Մինչդեռ այժմ, հնգամյակի յերրորդ տարվա վերջին կուլեկտիվացված է, գլխավորապես գյուղատնտեսական արտերկրում, գյուղացիական տնտեսությունների 60 տոկոսից ավելին: Խորհրդատեսական շինարարության ծավալման ասպարիզում մենք նույնպես գերազանցել ենք հնգամյակի առաջադրանքները: Գյուղատնտեսության վերակառուցումը սոցիալիստական հիմունքներով միանգամայն բացառիկ հաջողություններ է ձեռք բերում վերջին յերկու-յերեք տարվա ընթացքում:

Այս բոլորը հիմք է տալիս մեզ պնդելու, վոր յեկող տարվա ընթացքում գյուղացիական տնտեսությունների կուլեկտիվացումը խորհրդային Միության մեջ հիմնականում կավարտվի (ծափեր):

Սրանք են սոցիալիզմի շինարարության հանրագումարները տնտեսության վճռական ասպարեկների վերաբերյալ:

Մեր տնտեսական աշխատանքում առանձին տեղ են գրավում

Հայթայթման հարցերը, խորհրդային առևտրի կազմակերպման հարցերը: Այստեղ մեր հաջողությունները դեռևս բոլորովին անբավարար են: Այս դործի բարելավմանը մենք պետք է ձեռնարկենք այժմ առանձին հաստատակամությամբ:

Հայթայթման դործի թեկուծյունները նկատվում են այժմ յուրաքանչյուր քայլախիստում: Այդ աշխատանքի կազմակերպման բարդությունը, կուսակցության համապատասխան կազրերի բացփարար չլինելը, յերբ մյուս կողմից ամբողջ առևտրական և մատակարար կոոպերատիվ ապարատը խճողված է անհարադատ բուրժուական տարրերով, հայթայթման բնագավառը դարձնում են մեր աշխատանքի ամենախոցելի ասպարեղը, դրա համար ել այնքան ավելի մեծ վճռականություն դառնում է մատնանշում այժմ կուսակցությանը Հայթայթման դործի չուտափուլված բարելավման անհրաժեշտությունը, պետական, կոոպերատիվ, առևտրական ապարատում բյուրոկրատիզմի, յերբեմն ել վնասարարություն տարրերի դեմ պայքարն ուժեղացնելու անհրաժեշտությունը:

Առևտրի կազմակերպման դործը կապված է վոչ միայն անմիջականորեն քաղաքում, անմիջականորեն գյուղում առևտրաբաշխիչ ցանցի կազմակերպման խնդիրների հետ, այլև դրա հետ միասին քաղաքի և գյուղի միջև փոխհարաբերությունների մի ամբողջ շղթա ստեղծելու հետ: Միայն այս բանը վկայում է դործի բարդությունը և միաժամանակ խոսում է այդ ապարիկոմ մեր աշխատանքը լավացնելու հսկայական քաղաքական նշանակության մասին:

Հայթայթման հարցերն այժմ կուսակցությունը զբիւ է իր ամենաակտուալ խնդիրների կարգը: Բայց չէիկենք բանվորների և գյուղի աշխատավորների գլուխն անցած, պետք է ամենամոտիկ ժամանակներում վճռական բեկում առաջ բերեն խորհրդային առևտրի կազմակերպման դործում:

Մատակարարման չուտափուլված բարելավման նյութական հնարավորություններ մենք ունենք: Այդ հնարավորություններն որորի վրա աճում են:

Մեր յերկրում վոչ միայն ծանր արդյունաբերությունն է արտադրամարվում, այլ նաև մասսայական ուսումնական առարկաներ արտադրող արդյունաբերությունը: Թեթև արդյունաբերության զարգացման դործում առանձնապես նշանակալից հաջողություններ աւեննք վերջին ժամանակներս:

Ընդ սմին արդեն նշանակալից կերպով բարձրացված է արդարդյունաբերության պատվանդանը, վորն ապահովում է դրա արտադրանքի հետագա արագ աճումը և արդյունաբերական ապրանքների մատակարարման բարելավումը:

Սոցիալիստական տարրերի աճումը գյուղում ստեղծել է չուտափուլված բարենպաստ պայմաններ բանվորներին գյուղատնտեսական մթերքներ մատակարարելու համար: Այժմ, պարենավորման մթերքների մթերումների դործը գյուղատնտեսության մեջ զգալուպես աճելու պայմաններում, պարենային մթերքների մթերումներն ուժեղացնելու, բանվորներին պարենավորման մթերքներ մատ-

ակարարելու դործի բարելավումը նշանակալից չափով կախված է հենց մեզանից, մեր ապարատի բարելավումից:

Համառ աշխատանք պետական կոոպերատիվ առևտրական ապարատի բարելավման համար, ամենագաթման պայքար բյուրոկրատիզմի և առհասարակ բուրժուական տենդենցների դեմ, այդ դործում բանվորների և գյուղի կոոպերատիվների լայն խափերին ամենաակտիվ մասնակցություն կանչելը—այս բոլորը կարող են և պետք է նշանակալից կերպով բարելավեն մատակարարումն արդեն իսկ մոտ ժամանակներս:

Դրա հետ միատեղ չի կարելի չմատնանշել տնտեսական չխառնարության դժվարին բնագավառները, վորոնք վճռական նշանակություն ունեն ժողովրդատնտեսության համար:

Այդ բնագավառներն են ածուխը, մետաղը, տրանսպորտը:

Վոր սրանք սոցիալիստական տնտեսության վճռական բնագավառներն են, վկայում է Հոկտեմբերյան հեղափոխության ամբողջ պատմությունը: Ածխի, մետաղի, տրանսպորտի համար միջոց պայքարի շուրջը մենք այժմ ել պետք է համախմբենք մեր ուժերը մաքսիմումը: Այն որից ի վեր, յերբ Հոկտեմբերյան հեղափոխությունը հիմնականում լուծեց հացահատիկի պրոբլեմը, այսինքն հացի հարցը, մենք ել ավելի մեծ յեռանդով պետք է պայքարենք հանուն վճռական հաղթության՝ ածխի, մետաղի, տրանսպորտի ֆրոնտում:

Կուսակցությունը ցույց է տվել, թե ինչպես պետք է մոտենալ այդ խնդիրներին լուծմանը: Այդ ապարիկում մեր առջև դրված խնդիրները, ինչպես և ամբողջությամբ առած մեր խնդիրներն արգյունաբերության աշխատանքի նոր պայմաններում—տրված են մեր կուսակցության և նրա կենտրոնական Կոմիտեյի այն ցուցումներում, վորոնք արդեն հայտնի յեն վորպես «Ստալինի 6 ցուցումներ» (ծափեր):

Այդ ցուցումներում տրված են կարևորագույն պրակտիկ դիրեկտիվներ մեր տնտեսական աշխատանքի համար: Դրանցում մատնանշված է, թե վորոնք են մեր պարտավորությունները՝ այժմայնքան կարևոր դործի—արդյունաբերության համար նոր բանավորական կազրեր կազմակերպված ձևով հավաքագրելու վերաբերմամբ, թե ինչպես հարկավոր է ապահովել բանվորների աշխատանքի վարձատրման քաղաքականության ապարիկում մանրբուրժուական հավատարեցման—բանվոր դատակարգին խորթ ազդեցությունների այդ ամենապիտանալար արտահայտություն վերաջումը մեր տնտեսական պրակտիկայում, և ինչպես պետք է պայքարել արտադրության ապարիկում անթույլատրելի՝ մեքենաների և մեխանիզմների դիմադրկության դեմ: Դրա հետ միատեղ, այդ ցուցումներում մեր կուսակցությունը պարզաբանել է մեր այժմյան խնդիրները, ինչպես հին բուրժուական և կիսաբուրժուական տխրիկական կազրերի նկատմամբ, այնպես ել բանվոր դատակարարից նոր կազրեր, մանավանդ նոր տեխնիկական կազրեր արդյունաբերության վերաբերմամբ: Վերջապես այդ ցուցումներում

վճարարը ընդգծված և՛ հանուն սոցիալիստական տնտեսության, կուտակումների ավելացման, հանուն կուտակցության և խորհրդային իշխանության սահմանած անսահմանի քաղաքականության կիրառման բայլելիկյան պայքար մղելու անհրաժեշտությունը:

Սոցիալիստական տարրերը գլուղատնտեսության մեջ ամբողջական դերծում մեզ սպասում է դեռևս հսկայական աշխատանք:

Կուտակցությունն ուղադրության կենտրոնակետ է դարձրել կոլտնտեսությունների կազմակերպչական տնտեսական ամբողջական խնդիրը:

Այդ խնդրի կենսագործումը դեմ է առնում կուլակության դիմադրություն, վարի կողմից կոլտնտեսությունների դեմ մղվող պայքարի ձևերը շատ բանով են փոխվել, բայց ինքը պայքարը դեռևս չի վերջացել: Յեթե նույնիսկ խորհրդայինությունների չինարարության ասպարիզում մենք ստիպված ենք պայքար մղել բուրժուական տնտեսությունների արտահայտությունների, պետության կենսական պահանջների և կարևորագույն շահերի անտեսման փորձերի դեմ, ապա կոլտնտեսություններում մանր-բուրժուական տնտեսությունների արդեցությունն էլ ավելի ուժեղ է, և դրա համար ել կուլակը քիչ ճանապարհներ չի գտնում իր արդեցությունը կոլտնտեսականների աչք կամ այն մասի վրա տարածելու համար: Կորտնտեսական մասսաների բայլելիկյան դաստիարակությունը պետք է իր արտահայտությունը գտնի կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամեն կերպ ամբողջման մեջ, կոլտնտեսականների կողմից դիտակից վերաբերմունքի աճման մեջ օտարախոսական պետության հանդեպ ունեցած իրենց պարտավորությունների իրագործման խնդրում:

Վերև ասվածը հիմնականում վերաբերում է մեր ընթացիկ խնդիրները: Վերջին հաստատակամորեն ու հետևողականորեն իրականացնենք այդ խնդիրները պրակտիկայում, այնքան ավելի քարձր կլինի մեր շինարարության բայլելիկյան տեմպը, այնքան ավելի կրթված և աշխատանքի արտադրողականությունը մեր ինքուստրիայում և գյուղատնտեսության մեջ, այնքան ավելի հաղթականորեն առաջ կշարժվի սոցիալիզմի դործը:

Պայքարը սոցիալիզմի հաղթանակի համար մեր յերկրում միայն խորհրդային Միության բանվորության դործը չէ: Դա ամբողջ միջազգային պրոլետարիատի հարազատ դործն է:

Դրա հետ միասին, այդ պայքարը կապված է մեր զարգացման խաղաղ պայմանների սպասման հետ, հետևաբար նա անհրաժեշտ է իրենց կապված է խաղաղության համար մղվող պայքարի հետ: Կարիք չկա սպասեցելու, վոր ԽՍՀՄ կողմից հետևողականորեն մղվող պայքարը հանուն խաղաղության նույնպես հանդիսա ում է ամբողջ միջազգային պրոլետարիատի շահերի արտահայտությունը, բոլոր յերկրների աշխատավորության շահերի արտահայտությունը:

III. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՅԳԱՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Համաշխարհային կրիզիսը նշանակելի փոփոխություններ մտցրեց միջազգային դրություն մեջ:

Կապիտալիստական սիստեմի բոլոր հակասությունները, կրիզիսի պատճառով, էլ ավելի արվեցին, ընդ վերում միջազգային հակասությունների սրումն ավելի ու ավելի յե աճում իմպերիալիզմի բանակում: Դա անխուսափելի յե հենց այն պատճառով, վոր տնտեսական կրիզիսը նշանակելի չափով կրճատում է սպառման շուկաները, վորն իր հերթին միջանց դեմ է հանում կապիտալիստական յերկրներին: Հասկանալի յե, վոր դա նմանապես սրում է իրենց սկզբունքային հիմքով անհաշտելիորեն հակամարտ իմպերիալիստական բանակի և Խորհուրդների Սոցիալիստական Հանրապետության միջև դրություն ունեցող համաշխարհային հիմնական հակասությունը:

Ճիշտ է, վերջին ժամանակներս բուրժուական կառավարությունների ղեկավարների կողմից ավելի ու ավելի ղեկարարով հայտարարություններ են արվում խաղաղասիրական ձգտումների ու բարեկամական դրացյունների մասին: Հաճախակի յին դարձել ղիպյումստների և վոչ-դիպլոմատների ալցելությունները մայրաքաղաքից—մայրաքաղաք դադարի ու կիսազաղտի բանակցությունների համար: Սակայն բուրժուական մինիստրների խաղաղասիրական ղեկարարյանը վոչ մի ղեկընդ ու վոչ մի ղափով չեն խանդարել և յին խանդարի ուրիշ պետությունների հողամասերի իմպերիալիստական ինտերվենցիային և ոկուպացիային՝ առանձին, այդ բանի համար ավելի նախապատրաստված կապիտալիստական պետությունների կողմից:

Խաչորագույն իմպերիալիստական պետությունների ներկայացուցիչների հաճախակի դարձած խորհրդակցությունների իսկական իմաստը կատարելապես պարզ է:

Հասկանալի ավելի ու ավելի խորացող համաշխարհային կրիզիսի հետևանքով փոփոխված համաշխարհային իրադրության պայմաններում չի կարող չկատարվել ուժերի վորոշ վերաբաժնորում իմպերիալիստական բանակում:

Դա բղխում է իրենց արարանքը վաճառահանելու համար ավելի լայն ու ավելի կայուն շուկաներ սպասեցելու, իրենց կապիտալն աշխուղ ներդնելու պահանջից, դադուեթային և կախյալ յերկրների ողակման ձգտումից, վորպեսզի այնտեղ ղիստիանցի արտասահմանյան մրցակիցը և ալին: Այս բոլորն առաջ է բերում իմպերիալիստների ղարբերի վորոշ վերազասավորում— միջկառավարական համաձայնությունների ու բլոկների վերանորոգումը կամ դրանց փոխարինումը նոր համաձայնություններով ու բլոկներով, նոր դաշնակիցների վորումման ուժեղացումը և նորանոր վորձեր՝ կրիզիսի հետևանքներն ուրիշների, հատկապես ավելի թույլ պետու-

թ յուններն, գաղութներն և կրտապաղութներն ուսերին բարդեղութեամբ:

Այնչափ և խոսել այն մասին, վոր բուրժուական դիպլոմատիան իր բոլոր, գոնե խոշոր միջադպարին հաշիվներն ժամանակ, այժմ նշանակելի չափով ավելի տեսեք և հաշիվ անելի Խորհուրդներն Սոցիալիստական Հանրապետութեան աճող տեսակարար կշիռը: Այդ հաշիվներում նմանապես չեն կարող նշանակելի դեր չխաղալ իմպերիալիստների փորձերը՝ այս կամ այն չափով խանդարել մեր չինարարութեան հաջողութիւնները, նոր ձեռով նախապատրաստութիւն ինչպէս դեմ ուղղակի հարձակման:

Չի կարելի մոռանալ, վոր իմպերիալիստական պետութիւնները, վերջին հաշիվով, իրենց բոլոր արմատական հարցերը միմեայն ուղղակի դիմում կուրի միջոցով ան լուծում:

Համաշխարհային տնտեսական կրիզիսը սրում և աշխարհի նոր վերարաժանման պայքարի սրուելով, դրա համար ևլ նոր իմպերիալիստական կռիվների մտանգն այժմ մեծ արագութեամբ աճում է:

Այնչի ու ավելի մեծանում է կապիտալիստական յերկրների դարգացման անկախութիւնը:

Կրիզիսի հետևանքով և հատկապես կապիտալիստական պետութիւնների դարգացման խոշոր անհամաչափութեան անհոսթութեամբ կապիտալիզմի բոլոր հակասութիւններն սրումն ուժեղ կերպով ցնցում է դեռ յերեկ շատերին ամուր թվացող, հետպատեալութեան միջադպարին փոխհարաբերութիւնների հիմքը:

Այդպես է, որինակի համար, Վերսալի համաձայնութեան կիրառման շուրջն ստեղծված դրութիւնը: Առաջին անգամ չէ, վոր այդպիսի և տեղի ունենում Վերսալի դաշնադրի վերանայման հարցերի շուրջը: Այժմ հատկապես ավելի ուժեղ են ճարձատում Վերսալի գործերը: Այդ տեսակետից վոչ վոք չի խոսում կայունութեան մասին: Մինչդեռ Վերսալի հետպատեալութեան Յեյրոպայում միջադպարին փոխհարաբերութիւններն հիմք են: Յեւ վոչ միայն Յեյրոպայում:

Արժե գեռ կանգ առնել միջադպարին կյանքի ստանձին կարեւորագույն զեպքերի վրա:

Այսպես, մեծագույն իմպերիալիստական պետութիւնը՝ Մեծ Բրիտանիան, կրիզիսի կապակցութեամբ պակաս գեպարութիւններ չի ստրում:

Չխոսելով այնտեղ կատարվող քաղաքական վերախմբավորումներն մասին, չի կարելի անտեսել այն փաստը, վոր անգլիական բուրժուական զոհարերից իր Փունտ ստերինը: Սակայն հրաժարումն Փունտ ստերինի ամուր կուրսից կատարվեց, համենայն դեպս, վոչ թե նրա համար, վոր վերջին ժամանակներս անգլիական բուրժուալիստի դիրքերն ամրացան: Փունտի անկումն արտացոլում է այդ յերկրի իմպերիալիստական հզորութեան հիմք հոնդիսացող հողի տատանման նշանակալից ուժեղացումը: Սակայն հեշտացնելով աշխատավորութեան նոր թաղանի գործը (բանվորներ-

ի աշխատավորների իջեցումը և այլն), իր արտաքին անհատութիւնը ժամանակով մրցման բարեհաջող պայմաններն մեջ դնելով՝ կապիտալիստական Անգլիան դեռևս յերեկ դուրս չի յեկել դեմ-վարութիւնների ողակից: Ընդհակառակն, այդ գեպարութիւններն ու Փունտի անկումն անխուսափելիորեն ստանում են զեպի ներքին հակասութիւնների սրում, զեպի հարաբերութիւնների սրում միջադպարին իմպերիալիստական պայքարի ստալարիցում:

Մյուս ուժեղագույն կապիտալիստական յերկրի՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներն դրութիւնը նույնպես վկայում է կապիտալիստական բանակի մեծագույն փոփոխութիւնների մասին:

Դեռ յերեկ ՀԱՄՆ-ը հարստանում էր իր «բարգաւաճմամբ» (պրոսպերիտի): Այդ բարգաւաճմամբ ուղղվում էր և բանվորական արիստոկրատիայի վորոշ խմբակը: Սակայն ահա յերկու տարուց ավելի յե, ինչ ՀԱՄՆ-ն անըկորեն ցած է գլորվում: Բարգաւաճումից հետք անգամ չի մնացել: Չի կարելի ասել, վոր զեպքերն իման զարգացումը կարող է ոժանդակել Ամերիկայի կապիտալիզմի յերկրի ամրացմանը: Ընդհակառակն, այս բոլոր խոսում են այն բանի ողտին, վոր ամերիկյան բարգաւաճման կրակը հանդիսանում է կապիտալիզմի արագորեն աճող ընդհանուր կրիզիսի մի փայլուն արտահայտութիւն:

Կապիտալիզմի պատմանդան հողն արագութեամբ վողողվում է: Ահում է կապիտալիստական յերկրների տնտեսական ու քաղաքական զարգացման անկախութիւնը: Վորոշ զեպքերում տնտեսական կրիզիսն արագորեն նախադրյալներ է ստեղծում խոր քաղաքական կրիզիսի համար: Հեղափոխական բռնկումների ելեմենտները հասունանում են: Պրոլետարիական հեղափոխութեան նոր մակընթացութիւնների մոտենալն ավելի ու ավելի բացահայտ է դառնում:

Սակայն կապիտալիզմը դեռ քիչ հավատարիմ ծառաներ չունի աշխարհ կոչված «բանվորական» կազմակերպութիւնների մեջ: «Պարոն կապիտալի» համար սոցիալ-դեմոկրատիան հայթայթում է վոչ միայն նվիրված լակեյներ, այլև հավատարիմ շներ:

Յերկրորդ Ինտերնացիոնալը դարձել է իմպերիալիզմի դիտա-վոր նեցուկը բանվոր դատակարգի մեջ: Սոցիալ-դեմոկրատները դեռ չեն կորցրել իրենց աղղեցութիւնը բանվոր դատակարգի վորոշ շերտերի վրա: Մյուս կողմից՝ Յերկրորդ Ինտերնացիոնալի պարոն սոցիալիստների «սոցիալիզմը» վորոշ զեպքերում նպաստել է սոցիալիզմի գործի ուղղակի վարկաբեկմանը՝ բանվորական մասսաներում:

Այդ սրտճառով հանուն մասսաների պայքարող կոմունիզմի համար սոցիալ-դեմոկրատիայի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը հանդիսանում է վճռական հարց: Պայքարը սոցիալ-դեմոկրատիայի դեմ և դրա հետ կապված նրա դավաճանական դերի սխտեմատիկ ու անհեղինակութիւնը, անհաշտ հեղափոխական սկզբունքային դժի կիրառումը «սոցիալիստական» և «բանվորա-

(2043)
4865-9/ 2250/ 41

կանք կուսակցութիւններն վերաբերմամբ՝ ինչպէս բանլոր դասա-
կարգի պայքարի խոշորագույն հարցերում, նույնպէս և ամենորայ
պրոպանդիստական և այլ գործնական հարցերում, պետք է լինի
բանլոր դասակարգի համար մղվող պայքարի կենտրոնում, պետք
է լինի կոմունիզմի համար մղվող պայքարի կենտրոնում: Միայն
սոցիալ-դեմոկրատիայի դեմ սկզբունքային անհաշտ գործնական
պայքարով կոմունիզմը կապահովի իր արմատական խնդրի լու-
ծումը, այն է՝ իր կողմը կդրավի կապիտալիստական յերկրների
բանլոր դասակարգի մեծամասնութիւնը:

Սոցիալ-դեմոկրատիայի դեմ, մարքսիզմ-լենինիզմի սկզբունք-
ները հիման վրա մղվող հետևողական, իսկապէս անհաշտ պայ-
քարը կվճռէ անհաշտ խնդրի լուծումը և այդ հենարանը:

Յեթե փաստերը խոսում են այն մասին, վոր կապիտալիստա-
կոն յերկրների հիմքերը հետզհետե ավելի ու ավելի վաղացվում են,
վոր այդ առանձնապէս արագ է տեղի ունենում խոր կրիզիսի պայ-
մաններում, ապա մյուս կողմից՝ կապիտալիստական յերկրների
տնտեսական և քաղաքական հենց այդ աճող անկայունութիւնն պայ-
մաններում են ուժեղանում ԽՍՀՄ դեմ խնդրի լուծումը նոր
